ԿԱՐԾԻՔ

Սաթենիկ Միսակյանի «Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսագործնական հիմունքները» խորագրով

ԺԳ. 00.01.- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ներկայումս կենսական կարևոր նշանակություն ունի աճող սերնդի էկոլոգիական աշխարհայացքի՝ որպես նրանց էկոլոգիական մշակույթի կարևորագույն բաղադրիչի, աշխարհայացքի ձևավորման հարցերը:

Հանրակրթության բնագավառում իրականացվող բարեփոխումների, Նոր մանկավարժության դրույթների համատեքստում խորապես հաշվի են առնվում սովորողների անվտանգ և առողջ ապրելակերպի ապահովման, շրջակա միջավայրում բնականոն կենսագործունեությանը պատրաստության պահանջները, որոնք կարող են իրականացվել միայն համակարգված և պլանավորված էկոլոգիական կրթության շրջանակներում:

Ս.Միսակյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է վերը նշված պահանջների իրականացման գիտատեսական հիմքերի մշակմանը և գործնական միջոցների, մեթոդների, տեխնոլոգիաների առաջադրմանն ու հիմնավորմանը:

Ատենախոսությունը կազմված է համակարգչային 150 էջում ամփոփված՝ ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական վարկածն ու նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության փորձարարական բազան, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված են «Էկոլոգիական աշխարհայացք» հասկացության փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական մեկնաբանությունը, սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսական-մեթոդաբանական հիմնավորումը, ինչպես նաև առաջարկվող «Էկոլոգիայի և

բնապահպանության հիմունքներ» դասընթացի ձևավորման սկզբունքները և ուսումնական նպատակները:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է սովորողների էկոլոգիական էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման գործոնների, մանկավարժական պայմանների, մեթոդների, տեխնոլոգիաների բացահայտմանը և հիմնավորմանը, ինչպես նաև հետազոտության մեթոդիկային և արդյունքների վերլուծությանը:

Հետազոտությամբ հիմնավորել է հանրակրթական դպրոցում «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի՝ որպես ինքնուրույն առարկա ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Առանձնակի գիտագործնական արժեք է ներկայացնում ատենախոսի մշակած սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման Հայեցակարգը, դրա իրացման ռազմավարությունը, մանկավարժական մոդելը, որն իր մեջ ներառում է այդ գործընթացի նպատակը, հիմնական սկզբունքները, բովանդակությունը, իրականացման ձևերը, միջոցները, մեթոդները, տեխնոլոգիաները, դրանց գործառնության արդյունավետության ապահովման մանկավարժական պայմանները:

Ատենախոսի կողմից մշակվել և առաջադրվել են սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված առաջադրանքներ, դասերի ձեր, որոնք կարող են գործնական օգնություն լինել կենսաբանություն, քիմիա և բնագիտական այլ առարկաներ դասավանդող ուսուցիչներին այդ ծատ կարևոր հիմնախնդրի լուծման գործում:

Առանձնացվել և սահմանվել են սովորողների էկոլոգիական աշխարհայացքի **նպատակային**, **բնապահպանական պատրաստության** (մարդու բնության, շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ գիտելիքների ձեռբերման) **արժեքային-գնահատողական** (բնության նկատմամբ հուզական ապրումների, զգայական ընկալումների և արժեքային-գնահատողական վերաբերմունքի ձևավորում), **վարքային-խնայողական, կազմակերպչական-հաղորդակցական** բաղադրատարրերը:

5. Առաջադրվել և հիմնավորվել են դպրոցականների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման արդյունավետության մանկավարժական պայմանները:

Ատենախոսությունը բարձրարժեք գիտական հետազոտություն է, ունի գործնական կարևոր նշանակություն: Այն շարադրված է գիտական լեզվով:

Խորությամբ և գիտականորեն մշակված են հիմնախնդրի տեսական հիմքերը, մտահանգումները կատարվել են տրամաբանական և գիտական մոտեցումների համադրման արդյունքում, ինչը վկայում է ատենախոսի մասնագիտական բարձր պատրաստվածության և հիտահետազոտական կարողությունների առկայության մասին:

Ընդհանուր առմամբ, ատենախոսությունը ունի կուռ կառուցվածք, գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն ճիշտ փոխկապակցված են: Ատենախոսության համար ընտրված բնագավառը խիստ արդիական է, իսկ հետազոտման շրջանակները՝ հստակ:

Ատենախոսության մեջ առկա են կատարված հետազոտության արդյունքներին վերաբերող մի շարք աղյուսակներ, գծապատկերներ և դիագրամներ, որոնք լրացնում և ամբողջացնում են հեղինակի առաջ քաշած տեսական մոտեցումները:

Հետազոտության արդյունքում հեղինակը լուծել է առաջադրված բոլոր խնդիրները և հանգել համապատասխան տրամաբանական եզրահանգումների:

Այնուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ նաև մասնակի թերություններից՝

1. Հեղինակը ատենախոսության մեջ ներկայացրել է իր կողմից մշակված «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի այլընտրանքային ծրագիրը՝ առանձնացնելով ծրագրի արդիականությունը, նորմատիվային փաստաղթերը, նպատակը, խնդիրները, աշխատանքի հիմնական ուղղությունները, բովանդակությունը, ժամաքանակը, սակայն ծրագրում նշված չեն ակնկալվող վերջնարդյունքները /էջ 138-142/:
2. Հետազոտության մեջ նշված չեն, թե փորձարարությունը որ դասարանի սովորողների շրջանում է իրականացվել:
3. Ցանկալի կլիներ ատենախոսության մեջ լիարժեք ներկայացվեր փորձարարական աշխատանքները, մշակված մոդելի փորձարկման մեթոդիկան և արդյունքները:
4. Առկա են համակարգչային վրիպակներ:

Վերը նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտատեսական և գործնական արժեքը:

Սաթենիկ Միսակյանի «Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսագործնական հիմունքները» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն ինքնուրույն գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահաջներին և ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» թվանիշին:

Ատենախոսությունը երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Էրեբունի բժշկական ակադեմիա
հիմնադրամի ՄՄԿԾ դեկան,
մ.գ.թ. դոցենտ Ա. Ա. Բաղդասարյան

Ա. Ա. Բաղդասարյանի ստորագրությունը

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԷԲԱՀ գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ. դոցենտ Բ. Մարգարյան